

սպասեինք խաւար, «բայց», (իբրեւ բացատրութիւն) լոյսի ենք հանդիպում: Եւ մենք ի հարկէ չենք հաշուում այս «բայց»-ի հետ և ասում ենք. երեւի խաւարի մէջ եղել են և լուսաւոր երևոյթի սաղմերը, որոնց հեղինակը չէ նկատել, ընդհանուր խաւարի տպաւորութեան տակ. իսկ յետոյ, երբ այդ սաղմերը աճելով լուսաւոր պատկեր են տուել՝ հեղինակը չէ կարողացել նրան այլապէս հասկանալ՝ եթէ ոչ իբրեւ մի «բայց»: Մեր սովորութեան հակառակ՝ այս կէտը ապացուցանելու համար չենք բերում օրինակներ, որովհետեւ օտիպուած կը լինէինք պատմական քննութեան մէջ մտնելու, որ առանձին յօդուածների նիւթ կարող է լինել և ոչ մի մատենախօսական համառօտ ակնարկի: Միայն պէտք է ասենք, որ անբաւարար, նոյն-իսկ սխալ լուսաբանութիւնը աջնալիսի գաւառում, ինչպէս մեր պատմական անցեալն է՝ անխուսափելի է, և հրաշք կը լինէր՝ եթէ այդ մոռացուած, անմշակ, տեղեկութիւններով աղքատ անցեալը հէնց գրչի առաջին փորձով կատարելապէս լուսաբանուէր իր բոլոր խաւերում: Մենք չնորհակալ պէտք է լինենք Լէօից, որ ժամանակակից մէթօդի լոյսը ուղղել է մեր պատմութեան այդ խաւար էջերի վրայ և շատ բան լուսաւորել է յաջողութեամբ. չնորհակալ լինինք և չը յաջողուած կամ կասկածելի բացատրութիւնների համար—որովհետեւ հէնց դրանցով նա հարցասիրութիւն, հետաքրքրութիւն է շարժում ընթերցողների մէջ:

Գիրքը, իր նիւթով, չօչափած հարցերով, արտայայտած հայեացքներով, աշխոյժ, կենդանի պատմութեամբ ընթերցանութեան շատ հետաքրքրական նիւթ է ոչ միայն «ժողովրդի» համար, այլ և ինտելիգենտ դասակարգի համար, որի վերաբերութեամբ էլ սխալ չի լինի ասել հեղինակի խօսքը, թէ «ոչինչ չը գիտէ իր անցեալի մասին»:

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

13) Տօփ. Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆ. — Տարուիականութիւն. 9 տպագրութիւն. Կ. Պօլիս 1901 թ.

Դօկ. Տաղաւարեանը իր գրքոյկի մէջ աշխատել է չօչափել համարեա այն բոլոր խնդիրները, որոնք կապ ունեն դարձիւնի վրայ հետ: Գրքոյկը բաղկացած է երեք մասից. 1 մասում հեղինակը ծանօթացնում է ընթերցողին այն հայեացքների հետ, որոնք ընդունուած էին բնագիտութեան մէջ («Տեսակաների» մասին) մինչև Դարձիւնի աշխատութիւնների լոյս տեսնելը: Երկրորդ

մասում հեղինակը բացատրում է, թե ինչու մե և կայանում դարձինիզմը. իսկ երրորդում առաջ է բերում այն փաստերը, որոնք ապացուցանում են Դարվինի վարդապետությունը:

Մի փոքրիկ՝ 52 երեսից բաղկացած գրքոյկի մէջ բազմաթիւ հարցեր շօշափելու հետեանքն է, որ հեղինակը ստիպուած է եղել շատ համառօտ կերպով խօսել ամեն մէկ հարցի մասին: Շնորհիւ այդ հանգամանքի, գրքոյկն ստացել է կոնսպեկտի բնաւորութիւն. այն ընթերցողը, որ ոչինչ չը գիտէ դարվինիզմի մասին, հազիւ թէ կարողանայ զաղափար կազմել այդ վարդապետութեան մասին դօկ. Տաղաւարեանի գրքոյկով: Մեր կարծիքով՝ հեղինակը պէտք է իր ուշադրութիւնը կենտրոնացնէր միայն մի քանի ամենաէական կէտերի վրայ, դուրս ձգելով բոլոր երկրորդականները. այն ժամանակ նա հնարաւորութիւն կ'ունենար աւելի երկար կանգ առնել իւրաքանչիւր հարցի վրայ և աւելի լաւ պարզաբանել նրան:

Բրօչյւրի երկրորդ խոշոր պակասութիւնը նրանում է կայանում, որ հեղինակը համեմատաբար շատ երեսներ նուիրելով Լամարքի հայեացքներին (որ այնքան էլ անհրաժեշտ չէր) և Դարվինի վարդապետութիւնը ապացուցող փաստերին, շատ համառօտ կերպով է խօսում բուն դարվինիզմի մասին: Վերջապէս ի նկատի ունենալով, որ հասարակութիւնը յաճախ չիութում է դարվինիզմը առաջադիմութեան սկզբունքի (էվոլյուցիայի) հետ, ցանկալի կը լինէր աւելի շեշտած տեսնել այդ երկու տեսութիւնների տարբերութիւնը, քան այդ արել է դօկ. Տաղաւարեանը իր գրքոյկով:

Գրուածքի ոճը վերին աստիճան պարզ է և հասկանալի:

Ս. Բ.

1-1) Dr. V. Totomjanz und E. Toptschian. Die social-ökonomische Türkei. (Վ. Տոտոմյանց և Ե. Թօփչեան. Տաճկաստանը հասարակական և տնտեսական տեսակէտից). Berlin. 1901. հրատարակութիւն R. Prager.

Գրքի չապկի վրայ, որպէս էպիգրաֆ, տպագրուած են էնգելսի խօսքերը—«Տաճկական տիրապետութիւնը անկարելի է իսկապէս հաշտեցնել կապիտալիստական հասարակութեան հետ: Շահը ապահով չէ յաիշտակող սատրապների և փաշաների բեժիմի տակ. այստեղ պակասում է բուրժուական շահագործման էական պայմանը, այսինքն՝ առևտրականի և նրա սեփականու-